

Հաստատված է
ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՔՐԵԱԲԱՆՈՒԹՅԱՆ
 ամբիոնի 31.08.2020թ. նիստում (արձ. թիվ 1)
 Ամբիոնի պետի ժ/պ _____ Հ.Խաչատրյան
 31.08.2020թ.

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
 ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ**

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀՀ քրեական իրավունք
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ոստիկանական միջին մասնագիտական կրթության
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ոստիկանական գործ
ԱՄԲԻՈՆ	Քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոն E-mail: qreakan@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ	Մ.Մարկոսյան E-mail: misakmmm100@mail.ru
ՈՒՍ.ՏԱՐԻԿԻՄԱՍՅԱԿ	1-ին կուրս, 2-րդ կիսամյակ – 2-րդ կուրս, 3-րդ կիսամյակ

ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ	Մոդուլի ընդհանուր ծավալը կազմում է 180 ժամ, որից 46 ժամ դասախոսություն, 28 ժամ սեմինար պարապմունք, 46 ժամ գործնական պարապմունք, 60 ժամ ինքնուրույն աշխատանք: Ուսումնառության երկրորդ կիսամյակում նախատեսվում է 106 ժամ, որից 22 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունք, 16 ժամ գործնական պարապմունք, 30 ժամ ինքնուրույն աշխատանք: Ուսումնառության երրորդ կիսամյակում նախատեսվում է 60 ժամ, որից 24 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունք, 24 ժամ գործնական պարապմունք, 30 ժամ ինքնուրույն աշխատանք: Մոդուլը 2-րդ կիսամյակն ավարտվում է ստուգաբարձով, իսկ 3-րդ կիսամյակը քննությամբ: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին:
ՆԱԽԱՊԱՅՄԱՆ	Մոդուլը կառուցվում է «Պետության և իրավունքի տեսության հիմունքներ» մոդուլի իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	Մոդուլը բաղկացած է ընդհանուր և հատուկ մասերից: Մոդուլի ընդհանուր մասը բովանդակում է հիմնական դրույթներ քրեական իրավունքի հասկացության, առարկայի, սկզբունքների, համակարգի, հանցագործության և հանցակազմի հասկացության, տեսակների, հանցակազմի տարրերի, հանցակցության և արաքի հանցավորությունը բացառող հանգամանքների վերաբերյալ: Մոդուլի հատուկ մասը բովանդակում է հիմնական դրույթներ քրեական իրավունքի հատուկ մասի ընդհանուր բնութագրի, կյանքի և առողջության, ազատության, սեփականության, հասարակական անվտանգության, հասարակական կարգի և բնակչության

	<p>առողջության, պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ:</p>
<p>ՆՊԱՏԱԿ</p> <p>ԽՆԴԻՐ/ՆԵՐ</p>	<p>Մոդուլի նպատակն է քրեական իրավունքի հասկացության, առարկայի, սկզբունքների, համակարգի, հանցագործության և հանցակազմի հասկացության, տեսակների, հանցակազմի տարրերի, հանցակցության և արաքի հանցավորությունը բացառող հանգամանքների, կյանքի և առողջության, ազատության, սեփականության, հասարակական անվտանգության և հասարակական կարգի, պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների ուսումնասիրությունը:</p> <p>Մոդուլի խնդիրներն են՝</p> <ul style="list-style-type: none"> • ներկայացնել քրեական իրավունքի հասկացությունը, առարկան, սկզբունքները, համակարգը և խնդիրները, • սահմանել հանցագործության և հանցակազմի հասկացությունը և տեսակները, • ներկայացնել հանցակազմի տարրերը, • ուսումնասիրել հանցագործության փուլերի և հանցագործությունների բազմակիության ինստիտուտները, • ուսումնասիրել հանցակցության և արաքի հանցավորությունը բացառող հանգամանքների ինստիտուտները, • ուսումնասիրել կյանքի և առողջության, ազատության, սեփականության, հասարակական անվտանգության և հասարակական կարգի, բնակչության առողջության, պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական բնութագրերը:
<p>ԿՐԹԱԿԱՆ ԵՎՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</p> <p>1. Իմանա</p> <p>2. Կարողանա</p>	<ul style="list-style-type: none"> • քրեական իրավունքի հասկացությունը և սկզբունքները, • քրեական իրավունքի համակարգի կառուցվածքը հանցագործության և հանցակազմի հարաբերակցությունը, • արաքի հանցավորությունը բացառող հանգամանքների իրավաչափության պայմանները, • հանցագործության փուլերն ու հանցագործությունների բազմակիության տեսակները, • հանցակիցների տեսակները և նրանց պատասխանատվության առանձնահատկությունները, • ուսումնասիրել կյանքի և առողջության, ազատության, սեփականության, հասարակական անվտանգության և հասարակական կարգի, բնակչության առողջության, պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական բնութագրերը: <ul style="list-style-type: none"> • սահմանել քրեական իրավունքի հասկացությունը, • սահմանել քրեական իրավունքի խնդիրները, • ներկայացված կոնկրետ իրավիճակում հայտնաբերել քրեական իրավունքի կոնկրետ սկզբունքի խախտումը, • տալ հանցագործության հասկացությունը, վերլուծել դրա հատկանիշները, • տրված էլակետային տվյալների հիման վրա որոշել հանցագործության տեսակը, • սահմանել հանցակազմի հասկացությունը,

<p>3. Տիրապետի</p>	<ul style="list-style-type: none"> • դասակարգել հանցակազմի տեսակները ըստ հիմքերի, • ներկայացված կոնկրետ իրավիճակում ճիշտ որոշել հանցակազմի տեսակը՝ ըստ համապատասխան հիմքի, • բացահայտել հանցակազմի տարրերի բովանդակությունը, • տարբերակել հանցակազմի պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները, • սահմանել հանցագործության փուլերը, • սահմանել հանցագործությունների բազմակիության տեսակները, • սահմանել հանցակցության հասկացությունը, • բնորոշել հանցակիցների տեսակները, • ներկայացված կոնկրետ իրավիճակում ճիշտ իրավաբանական գնահատական տալ հանցակցի արարքին, • մատնանշել հանցակիցների քրեական պատասխանատվության առանձնահատկությունները, • ներկայացնել արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների իրավաչափության պայմանները, • ճիշտ որակել կյանքի և առողջության, ազատության, սեփականության, հասարակական անվտանգության և հասարակական կարգի, բնակչության առողջության, պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունները: <ul style="list-style-type: none"> • հանցակցությամբ կատարվող հանցագործությունների, հանցագործության փուլերի, հանցագործությունների բազմակիության որակման կանոններին, • արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների իրավաչափության պայմանների հավաստման կանոններին, • կյանքի և առողջության, ազատության, սեփականության, հասարակական անվտանգության և հասարակական կարգի, բնակչության առողջության, պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների որակման կանոններին:
--------------------	--

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	
<p>Հիմնական</p>	<ol style="list-style-type: none"> 1. Ամբիոնի կողմից մշակված դասախոսություններ 2. Ս.Առաքելյան և ուրիշներ: ՀՀ քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Դասագիրք բուհերի համար: ԵՊՀ հրատ., Երևան, 2012, 3. Ս. Առաքելյան և ուրիշներ: ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս: ԵՊՀ հրատ., Երևան, 2012, 4. Գ.Թ.Գրիգորյան, Մ.Մ.Մարկոսյան ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները քրեաիրավական նորմերի կիրառման վերաբերյալ/Երկրորդ լրամշակված հրատարակություն/Երևան, <<Արման Ասմանգուլյան>> ԱԶ տպարան, 2015թ., 300 էջ, 5. Գրիգորյան Մ.Վ., ՀՀ քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Հրազդան, 2003թ. 6. Уголовное право. Общая и особенная части/ Под ред. Н.Г. Кадникова.- М.: “Городец”, 2006. 7. Ветров Н.И. Уголовное право. Общая и Особенная части.- М.: “Книжный мир”, 2005. 8. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации/ Под общ. ред. В.М.Лебедева. - М.: «НОРМА», 2004.
<p>Լրացուցիչ</p>	<ol style="list-style-type: none"> 1. Գրիգորյան Մ., Զիլֆուղարյան Մ., Անձի կյանքի դեմ ուղղված հանցագործությունների որակման տեսական ու գործնական

	<p>հիմունքները, Երևան, 2004թ.</p> <p>2. Թամազյան Ա., Անձի դեմ ուղղված հանցագործություններ, Երևան, 2005թ.</p> <p>3. Լ.Գրիգորյան Հանցագործության կատարողի օրենսդրական բնորոշման կատարելագործման հեռանկարները//Պետություն և իրավունք, 2016թ., թիվ 1 (71), էջ 87-94:</p> <p>4. Гаухман Л.Д. Квалификация преступлений: закон, теория, практика. М., 2005,</p> <p>5. Аветисян С.С. Специальный субъект преступления и уголовная ответственность. -Ереван, 2003.</p> <p>6. Парог А.И. Квалификация преступлений по субъективным признакам. СПб., 2003.</p>
--	--

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ	Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով	
	9-10	Գերազանց	
	7-8	Լավ	
	4-6	Բավարար	
	0-3	Անբավարար	
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	<p>Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝</p> <p>ա) «Գերազանց», եթե սովորողը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ուստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով.</p> <p>բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների.</p> <p>գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները.</p> <p>դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:</p>		
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
	Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:		

Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ Ինքնուրույն աշխատանքներ	Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է անբավարար:
	Ինքնուրույն գրավոր աշխատանքներն անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն գրավոր աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ՄՈՂՈՒԼԻ ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՂՈՒՄ

ՕՐ/ԼՍԱ Բ. ՊԱՐԱՊ.	ԹԵՄԱ/ԺԱՄ	ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ	ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՂԻՄԱՆՔՆԵՐ	ԳՆԱՀԱՏՈՒՄ
1-ին լսար. պարապ.	Քրեական իրավունքի հասկացությունը, առարկան, համակարգը և խնդիրները Դասախոսություն (2 ժամ)	<p>Տեսակը՝ դասախոսություն</p> <ul style="list-style-type: none"> դասախոսություն (ավանդական) <p>Նպատակը՝ ներկայացնել քրեական իրավունքի հասացությունը, առարկան, համակարգը և խնդիրները</p> <p>Քննարկվող հարցերը՝ Քրեական իրավունքի հասկացությունը: Քրեական իրավունքը որպես իրավունքի միասնական համակարգի ինքնուրույն ճյուղ: Քրեական իրավունքի առարկան, քրեաիրավական հարաբերություններ: Քրեական իրավունքի համակարգը: Քրեական իրավունքի խնդիրները:</p>	<ul style="list-style-type: none"> ուշադրություն դարձնել քրեական իրավունքի կարգավորման առարկային հիշել քրեական իրավունքի կողմից պաշտպանվող օբյեկտների թվարկման հերթականությունը մատնանշել քրեական իրավունքի ընդհանուր և հատուկ մասերի փոխկապակցվածությունը ուրվագծել քրեական իրավունքի և իրավունքի այլ ճյուղերի միջև կապը մատնանշել քրեական իրավունքի խնդիրները 	<p>Ընթացիկ գնահատում. Ակտիվություն, հետադարձ կապ՝ քննարկումներ, հիմնավորումներ, հարցադրումներ</p>
2-րդ լսար. պարապ.	Քրեական իրավունքի հասկացությունը, առարկան, համակարգը և խնդիրները սեմինար պարապմունք (2 ժամ)	<p>Տեսակը՝ սեմինար պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> սովորողների հարցում խմբային քննարկումներ <p>Նպատակը՝ ամրապնդել տեսական գիտելիքները քրեական իրավունքի հասացության, առարկայի, համակարգի և խնդիրների մասին</p> <p>Քննարկվող հարցերը՝ Քրեական իրավունքի հասկացությունը: Քրեական իրավունքը որպես իրավունքի միասնական համակարգի</p>	<ul style="list-style-type: none"> ներկայացնել քրեական իրավունքի հասկացությունը: բնութագրել քրեական իրավունքը որպես իրավունքի միասնական համակարգի ինքնուրույն ճյուղ ներկայացնել քրեական իրավունքի առարկան թվարկել և մեկնաբանել քրեական իրավունքի խնդիրները: 	<p>Ընթացիկ գնահատում. Ակտիվություն, ներկա սովորողների առնվազն 30 տոկոսի կողմից բավարար գիտելիքների հավաստում և գնահատում</p>

		ինքնուրույն ճյուղ: Քրեական իրավունքի առարկան, քրեաիրավական հարաբերություններ: Քրեական իրավունքի խնդիրները:		
3-րդ լսար. պարասյ.	Քրեական իրավունքի սկզբունքները Դասախոսություն (2 ժամ)	Տեսակը՝ դասախոսություն <ul style="list-style-type: none"> դասախոսություն (ավանդական) կոկրետ իրավիճակների քննարկում Նպատակը՝ ներկայացնել քրեական իրավունքի սկզբունքների բովանդակությունը Քննարկվող հարցերը՝ Քրեական իրավունքի սկզբունքների հասկացությունը: Օրինականության սկզբունքը քրեական իրավունքում: Անալոգիայի արգելումը: Օրենքի առաջ հավասարության սկզբունքը, դրա առանձնահատկությունը քրեական իրավունքում: Պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը: Անձնական պատասխանատվության սկզբունքը: Ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը: Օբյեկտիվ մեղսայնացման արգելումը: Արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը: Անհրաժեշտ հանգամանքներ, որոնք հաշվի են առնվում քրեական պատասխանատվության և պատժի անհատականացման սկզբունքը կիրառելիս: Անձին միննույն հանցագործության համար երկրորդ անգամ դատապարտելու արգելումը: Մարդասիրության սկզբունքը քրեական իրավունքում, դրա դրսևորումները:	<ul style="list-style-type: none"> ուշադրություն դարձնել քրեական իրավունքի յուրաքանչյուր սկզբունքի հիմնական պահանջներին հիշել քրեական իրավունքի սկզբունքներով նախատեսված արգելքները ներկայացնել օրինակներ, որոնցում խախտվում է այս կամ այն սկզբունքը 	Ընթացիկ գնահատում. Ակտիվություն, հետադարձ կապ բանավոր հիմնավորումներ, հարցադրումներ
4-րդ լսար. պարասյ.	Քրեական իրավունքի սկզբունքները գործնական պարապմունք (2 ժամ)	Տեսակը՝ գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> խմբային քննարկումներ գործնական առաջադրանքներ կոնկրետ իրավիճակների 	<ul style="list-style-type: none"> ներկայացված կոնկրետ իրավիճակում մատնանշել քրեական իրավունքի այս կամ այն սկզբունքի խախտման փաստը և հիմնավորել 	Ընթացիկ գնահատում. Ակտիվություն, ներկա սովորողների առնվազն 30 տոկոսի կողմից բավարար

		<p>վերլուծություն խնդիրների առաջադրմամբ</p> <p>Նպատակը` ներկայացնել քրեական իրավունքի սկզբունքների բովանդակությունը</p> <p>Քննարկվող հարցերը` Քրեական իրավունքի սկզբունքների հասկացությունը: Օրինականության սկզբունքը քրեական իրավունքում: Անալոգիայի արգելումը: Օրենքի առաջ հավասարության սկզբունքը, դրա առանձնահատկությունը քրեական իրավունքում: Պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը: Անձնական պատասխանատվության սկզբունքը: Ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը: Օբյեկտիվ մեղսայնացման արգելումը: Արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը: Անհրաժեշտ հանգամանքներ, որոնք հաշվի են առնվում քրեական պատասխանատվության և պատժի անհատականացման սկզբունքը կիրառելիս: Անձին միևնույն հանցագործության համար երկրորդ անգամ դատապարտելու արգելումը: Մարդասիրության սկզբունքը քրեական իրավունքում, դրա դրսևորումները:</p>	<p>սեփական մոտեցումը</p> <ul style="list-style-type: none"> • հակառակ կողմի մատնանշած փաստարկին բերել սեփական հակափաստարկ • ցուցաբերել խմբում աշխատելու կարողություն 	<p>գիտելիքների հավաստում և գնահատում, գործնական առաջադրանքների ճիշտ լուծում</p>
<p>5-րդ լսար. պարսպ.</p>	<p>Քրեական օրենքը Դասախոսություն (2 ժամ)</p>	<p>Տեսակը` դասախոսություն</p> <ul style="list-style-type: none"> • դասախոսություն (ավանդական) <p>Նպատակը` ներկայացնել քրեական օրենքի բովանդակությունը</p> <p>Քննարկվող հարցերը` Քրեական օրենքի</p>	<ul style="list-style-type: none"> • ներկայացնել քրեական օրենքի հասկացությունը: • բնութագրել քրեական օրենքի աղբյուրները • ներկայացնել քրեական օրենքի գործողությունների տեսակները՝ տարածության և ժամանակի մեջ և օրենքի հետադարձ ուժը 	<p>Ընթացիկ գնահատում. Ակտիվություն, հետադարձ կապ բանավոր հիմնավորումներ, հարցադրումներ</p>

		<p>հասկացությունը, կառուցվածքը: Քրեական օրենքի գործողությունը տարածության մեջ: ՀՀ քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում: Քրեական օրենքի հետադարձ ուժը:</p>	<p>ներկայացնել հանցանք կատարած անձանց հանձնելը</p>	
<p>6-րդ լսար. պարապ</p>	<p>Քրեական օրենքը Դասախոսություն (2 ժամ)</p>	<p>Տեսակը՝ դասախոսություն</p> <ul style="list-style-type: none"> դասախոսություն (ավանդական) <p>Նպատակը՝ ներկայացնել քրեական օրենքի բովանդակությունը</p> <p>Քննարկվող հարցերը: ՀՀ քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում: Քրեական օրենքի հետադարձ ուժը</p>	<ul style="list-style-type: none"> ներկայացնել քրեական օրենքի հասկացությունը: բնութագրել քրեական օրենքի աղբյուրները ներկայացնել քրեական օրենքի գործողությունների տեսակները տարածության և ժամանակի մեջ և օրենքի հետադարձ ուժը ներկայացնել հանցանք կատարած անձանց հանձնելը 	<p>Ընթացիկ գնահատում. Ակտիվություն, հետադարձ կապ՝ բանավոր հիմնավորումներ, հարցադրումներ</p>
<p>7-րդ լսար. պարապ.</p>	<p>Քրեական օրենքը սեմինար պարապմունք (2 ժամ)</p>	<p>Տեսակը՝ սեմինար պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> սովորողների հարցում թեստային վարժությունների լուծում խմբային քննարկումներ կոնկրետ իրավիճակների վերլուծություն <p>Նպատակը՝ ամրապնդել քրեական օրենքի վերաբերյալ տեսական գիտելիքները, պարզաբանել անհասկանալի հարցերը</p> <p>Քննարկվող հարցերը՝ Քրեական օրենքի հասկացությունը: Քրեական օրենսգրքի ընդհանուր և հատուկ մասերի հարաբերակցությունը: Քրեական օրենքի գործողությունը տարածության մեջ: ՀՀ տարածքի հասկացությունը: Հանցանքի կատարման վայրի հասկացությունը: Հանցանքի կատարման վայրի որոշման առանձնահատկությունները կապված</p>	<ul style="list-style-type: none"> ուշադրություն դարձնել քրեական օրենքի կառուցվածքին և հիմնական պահանջներին ներկայացնել քրեական օրենքի կիրառելիության պահանջները, ներկայացնել օրինակներ, իրավիճակներ 	<p>Ընթացիկ գնահատում. Ակտիվություն, ներկա սովորողների առնվազն 30 տոկոսի կողմից բավարար գիտելիքների հավաստում և գնահատում</p>

		<p>հանցագործությունների տարբեր տեսակների հետ (արարքի և հետևանքների միջև եղած տարածքային սահմանազատման դեպքերում, շարունակվող, տևող և հանցակցությամբ կատարված հանցանքների դեպքում): ՀՀ քրեական օրենքի գործողությունը ՀՀ քաղաքացիների կամ ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիության չունեցող անձանց կողմից ՀՀ տարածքից դուրս հանցանք կատարելու դեպքում: ՀՀ քրեական օրենքի գործողությունը օտարերկրյա քաղաքացիների կամ ՀՀ-ում մշտապես չբնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց կողմից ՀՀ տարածքից դուրս հանցանք կատարելու դեպքում: ՀՀ քրեական օրենքի գործողությունը դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձանց կողմից ՀՀ տարածքում հանցանք կատարելու դեպքում: Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում: Քրեական օրենքի ժամանակի ընթացքում գործողության հիմնական սկզբունքը: Հանցանքի կատարման ժամանակի որոշումը առանձին հանցագործությունների հետ կապված (արարքի և հետևանքների միջև ժամանակային խզման դեպքերում, տևող, շարունակվող և հանցակցությամբ կատարվող հանցանքների դեպքում): Քրեական օրենքի հետադարձ ուժը:</p>		
<p>8-րդ լսար. պարապ.</p>	<p>Քրեական օրենքը գործնական պարապմունք (2 ժամ)</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> ▪ խմբային քննարկումներ ▪ գործնական առաջադրանքներ ▪ կոնկրետ իրավիճակների վերլուծություն 	<ul style="list-style-type: none"> • ուշադրություն դարձնել քրեական օրենքի կառուցվածքին և հիմնական պահանջներին • ներկայացնել քրեական օրենքի կիրառելիության պահանջները, ներկայացնել օրինակներ, 	<p>Շնորհակալ գնահատում. Ակտիվություն, ներկա սովորողների առնվազն 30 տոկոսի կողմից բավարար գիտելիքների հավաստում և գնահատում, գործնական</p>

		<p>Նպատակը՝ ներկայացնել քրեական օրենքի բովանդակությունը</p> <p>Քննարկվող հարցերը՝ Քրեական օրենքի հասկացությունը: Քրեական օրենսգրքի ընդհանուր և հատուկ մասերի հարաբերակցությունը: Քրեական օրենքի գործողությունը տարածության մեջ: ՀՀ տարածքի հասկացությունը: Հանցանքի կատարման վայրի հասկացությունը: Հանցանքի կատարման վայրի որոշման առանձնահատկությունները կապված հանցագործությունների տարբեր տեսակների հետ (արարքի և հետևանքների միջև եղած տարածքային սահմանազատման դեպքերում, շարունակվող, տևող և հանցակցությամբ կատարված հանցանքների դեպքում): ՀՀ քրեական օրենքի գործողությունը ՀՀ քաղաքացիների կամ ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիության չունեցող անձանց կողմից ՀՀ տարածքից դուրս հանցանք կատարելու դեպքում: ՀՀ քրեական օրենքի գործողությունը օտարերկրյա քաղաքացիների կամ ՀՀ-ում մշտապես չբնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց կողմից ՀՀ տարածքից դուրս հանցանք կատարելու դեպքում: ՀՀ քրեական օրենքի գործողությունը դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձանց կողմից ՀՀ տարածքում հանցանք կատարելու դեպքում: Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում: Քրեական օրենքի ժամանակի ընթացքում գործողության հիմնական</p>	<p>իրավիճակներ, լուծել թեմային առնչվող խնդիրներ</p>	<p>առաջադրանքների լուծում</p>	<p>ճիշտ</p>
--	--	---	---	-------------------------------	-------------

		սկզբունքը: Հանցանքի կատարման ժամանակի որոշումը առանձին հանցագործությունների հետ կապված (արարքի և հետևանքների միջև ժամանակային խզման դեպքերում, տևող, շարունակվող և հանցակցությամբ կատարվող հանցանքների դեպքում): Քրեական օրենքի հետադարձ ուժը:		
9-րդ լսար. պարսպ.	Հանցագործություն Դասախոսություն (2 ժամ)	Տեսակը՝ դասախոսություն <ul style="list-style-type: none"> դասախոսություն (ավանդական) կոկրետ իրավիճակների քննարկում Նպատակը՝ ներկայացնել հանցագործության բովանդակությունը Քննարկվող հարցերը՝ Հանցագործության հասկացությունը: Հանցագործության հատկանիշները: Հանցագործությունների դասակարգումը ըստ վտանգավորության աստիճանի և բնույթի:	<ul style="list-style-type: none"> ուշադրություն դարձնել հանցագործության բովանդակությանը և կառուցվածքային տարրերին 	Ընթացիկ գնահատում. Ակտիվություն, հետադարձ կապ բանավոր հիմնավորումներ, հարցադրումներ
10-րդ լսար. պարսպ.	Հանցագործություն գործնական պարապմունք (2 ժամ)	Տեսակը՝ գործնական պարապմունք <ul style="list-style-type: none"> խմբային քննարկումներ գործնական առաջադրանքներ կոնկրետ իրավիճակների վերլուծություն դատախաղի մեթոդ Նպատակը՝ ներկայացնել հանցագործության բովանդակությունը Քննարկվող հարցերը՝ Հանցագործության հասկացությունը: Հանցագործության հատկանիշները: Հանրային վտանգավորությունը որպես հանցագործության հատկանիշ:	<ul style="list-style-type: none"> ներկայացնել հանցագործության հասկացությունը: բնութագրել հանցագործության հատկանիշները առաջադրել կոնկրետ իրավիճակներ և թեմային առնչվող խնդիրներ 	Ընթացիկ գնահատում. Ակտիվություն, ներկա սովորողների առնվազն 30 տոկոսի կողմից բավարար գիտելիքների հավաստում և գնահատում

		<p>Հանրային վտանգավորությունը որպես հանցագործությունը այլ իրավախախտումներից սահմանազատելու չափանիշ: Հակաօրինականությունը որպես հանցագործության հատկանիշ: Մեղավորությունը որպես հանցագործության հատկանիշ: Հանցագործությունների դասակարգումը ըստ վտանգավորության աստիճանի և բնույթի: Հանցագործությունների դասակարգման քրեաիրավական նշանակությունը:</p>		
<p>11-րդ լսար. պարասյ.</p>	<p>Հանցակազմ Դասախոսություն (2 ժամ)</p>	<p>Տեսակը՝ դասախոսություն</p> <ul style="list-style-type: none"> • դասախոսություն (ավանդական) • կոկրետ իրավիճակների քննարկում <p>Նպատակը՝ ներկայացնել հանցակազմի բովանդակությունը</p> <p>Քննարկվող հարցերը՝ Հանցակազմի հասկացությունը: Հանցակազմը որպես քրեական պատասխանատվության հիմք: Հանցակազմի և հանցագործության հարաբերակցությունը: Հանցակազմի նշանակությունը: Հանցակազմի տարրերը: Հանցակազմի պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները:</p>	<ul style="list-style-type: none"> • ուշադրություն դարձնել հանցակազմի բովանդակությանը և կառուցվածքային տարրերին 	<p>Ընթացիկ գնահատում. Ակտիվություն, հետադարձ կապ բանավոր հիմնավորումներ, հարցադրումներ</p>
<p>12-րդ լսար. պարասյ.</p>	<p>Հանցակազմ սեմինար պարապմունք (2 ժամ)</p>	<p>Տեսակը՝ սեմինար պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • սովորողների հարցում • թեստային վարժությունների լուծում • խմբային քննարկումներ • կոնկրետ իրավիճակների վերլուծություն <p>Նպատակը՝ ամրապնդել հանցակազմի</p>	<ul style="list-style-type: none"> • ներկայացնել հանցակազմի հասկացությունը: • բնութագրել հանցակազմի հատկանիշները 	<p>Ընթացիկ գնահատում. Ակտիվություն, ներկա սովորողների առնվազն 30 տոկոսի կողմից բավարար գիտելիքների հավաստում և գնահատում</p>

		<p>վերաբերյալ տեսական գիտելիքները, պարզաբանել անհասկանալի հարցերը</p> <p>Քննարկվող հարցերը` Հանցակազմի հասկացությունը: Հանցակազմը որպես քրեական պատասխանատվության հիմք: Հանցակազմի և հանցագործության հարաբերակցությունը: Հանցակազմի նշանակությունը: Հանցակազմի տարրերը: Հանցակազմի պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները:</p>		
13-րդ լսար. պարասյ.	Հանցակազմ գործնական պարապմունք (2 ժամ)	<p>Տեսակը` գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> ▪ խմբային քննարկումներ ▪ գործնական առաջադրանքներ ▪ կոնկրետ իրավիճակների վերլուծություն <p>Նպատակը` ներկայացնել հանցակազմի բովանդակությունը</p> <p>Քննարկվող հարցերը` Հանցակազմի հասկացությունը: Հանցակազմը որպես քրեական պատասխանատվության հիմք: Հանցակազմի և հանցագործության հարաբերակցությունը: Հանցակազմի նշանակությունը: Հանցակազմի տարրերը: Հանցակազմի պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները</p>	<ul style="list-style-type: none"> • ներկայացնել հանցակազմի հասկացությունը: • բնութագրել հանցակազմի հատկանիշները • առաջադրել թեմային առնչվող խնդիրներ և իրավիճակներ 	Ընթացիկ գնահատում. Ակտիվություն, ներկա սովորողների առնվազն 30 տոկոսի կողմից բավարար գիտելիքների հավաստում և գնահատում
14-րդ լսար. պարասյ.	Քրեական իրավունքի հասկացությունը, առարկան, համակարգը, խնդիրները,	<p>Տեսակը` Գործնական պարապմունք-ընթացիկ ստուգում</p> <p>Նպատակը` ստուգել նախորդ թեմաներից</p>	Սովորողներին տրվում է ընթացիկ ստուգման օրը	Ընթացիկ գնահատում. Գնահատումը կատարվում է 10 բալանոց համակարգով

	<p>սկզբունքները, քրեական օրենք, հանցագործություն Գործնական պարապմունք-ընթացիկ ստուգում (2 ժամ)</p>	<p>սովորողների գիտելիքներն ու կարողությունները</p>		
<p>15-րդ լսար. պարապ.</p>	<p>Հանցակազմի օբյեկտիվ հատկանիշներ Դասախոսություն (2 ժամ)</p>	<p>Տեսակը՝ դասախոսություն</p> <ul style="list-style-type: none"> • Ինտերակտիվ զրույց • դասախոսություն (ավանդական) • կոկրետ իրավիճակների քննարկում <p>Նպատակը՝ ներկայացնել հանցակազմի օբյեկտիվ հատկանիշների բովանդակությունը</p> <p>Քննարկվող հարցերը՝ Հանցագործության օբյեկտի հասկացությունը: Հասարակական հարաբերությունները որպես հանցագործության օբյեկտ: Հանցագործության օբյեկտների տեսակները՝ ընդհանուր, սեռային, տեսակային, անմիջական, հիմնական և լրացուցիչ անմիջական օբյեկտներ: Հանցագործության օբյեկտիվ կողմի հասկացությունը և նշանակությունը: Հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները: Հանրորեն վտանգավոր արարք (գործողություն կամ անգործություն): Հանրորեն վտանգավոր հետևանքներ, հասկացությունը, տեսակները: Պատճառական կապը և դրա քրեաիրավական նշանակությունը: Հանցագործության եղանակը, ժամանակը, տեղը, իրադրությունը, գործիքը և միջոցը, դրանց քրեաիրավական նշանակությունը:</p>	<ul style="list-style-type: none"> • ուշադրություն դարձնել հանցակազմի օբյեկտիվ հատկանիշների բովանդակությանը և հասկացությանը, կառուցվածքային տարրերին 	<p>Ընթացիկ գնահատում. Ակտիվություն, հետադարձ կապ, բանավոր հիմնավորումներ, հարցադրումներ</p>

<p>16-րդ լսար. պարապ.</p>	<p>Հանցակազմի օբյեկտիվ հատկանիշներ Դասախոսություն (2 ժամ)</p>	<p>Տեսակը՝ դասախոսություն</p> <ul style="list-style-type: none"> • Ինտերակտիվ զրույց • դասախոսություն (ավանդական) • կոկրետ իրավիճակների քննարկում <p>Նպատակը՝ ներկայացնել հանցակազմի օբյեկտիվ հատկանիշների բովանդակությունը</p> <p>Քննարկվող հարցերը՝ Հանցագործության օբյեկտի հասկացությունը: Հասարակական հարաբերությունները որպես հանցագործության օբյեկտ: Հանցագործության օբյեկտների տեսակները՝ ընդհանուր, սեռային, տեսակային, անմիջական, հիմնական և լրացուցիչ անմիջական օբյեկտներ: Հանցագործության օբյեկտիվ կողմի հասկացությունը և նշանակությունը: Հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները: Հանրորեն վտանգավոր արարք (գործողություն կամ անգործություն): Հանրորեն վտանգավոր հետևանքներ, հասկացությունը, տեսակները: Պատճառական կապը և դրա քրեաիրավական նշանակությունը: Հանցագործության եղանակը, ժամանակը, տեղը, իրադրությունը, գործիքը և միջոցը, դրանց քրեաիրավական նշանակությունը:</p>	<ul style="list-style-type: none"> • ուշադրություն դարձնել հանցակազմի սուբյեկտիվ հատկանիշների բովանդակությանը և կառուցվածքային տարրերին 	<p>Շնթացիկ գնահատում. Ակտիվություն, հետադարձ կապ բանավոր հիմնավորումներ, հարցադրումներ</p>
<p>17-րդ լսար. պարապ.</p>	<p>Հանցակազմի օբյեկտիվ հատկանիշներ սեմինար պարապմունք (2 ժամ)</p>	<p>Տեսակը՝ սեմինար պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • սովորողների հարցում • թեստային վարժությունների լուծում • խմբային քննարկումներ • կոնկրետ իրավիճակների վերլուծություն 	<ul style="list-style-type: none"> • ներկայացնել հանցակազմի օբյեկտիվ հատկանիշները: • բնութագրել հանցակազմի օբյեկտը և օբյեկտիվ կողմի հատկանիշները • ուշադրություն դարձնել 	<p>Շնթացիկ գնահատում. Ակտիվություն, ներկա սովորողների առնվազն 30 տոկոսի կողմից բավարար գիտելիքների հավաստում և գնահատում</p>

		<p>Նպատակը` ամրապնդել հանցակազմի օբյեկտիվ հատկանիշների վերաբերյալ տեսական գիտելիքները, պարզաբանել անհասկանալի հարցերը</p> <p>Քննարկվող հարցերը` Հանցագործության օբյեկտի հասկացությունը: Հասարակական հարաբերությունները որպես հանցագործության օբյեկտ: Հանցագործության օբյեկտների տեսակները` ընդհանուր, սեռային, տեսակային, անմիջական, հիմնական և լրացուցիչ անմիջական օբյեկտներ: Հանցագործության օբյեկտիվ կողմի հասկացությունը և նշանակությունը: Հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները: Հանրորեն վտանգավոր արարք (գործողություն կամ անգործություն): Հանրորեն վտանգավոր հետևանքներ, հասկացությունը, տեսակները: Պատճառական կապը և դրա քրեաիրավական նշանակությունը: Հանցագործության եղանակը, ժամանակը, տեղը, իրադրությունը, գործիքը և միջոցը, դրանց քրեաիրավական նշանակությունը:</p>	<p>օբյեկտիվ հատկանիշները կոնկրետ իրավիճակներում կիրառելու հմտություններին</p>	
<p>18-րդ լսար. պարապ.</p>	<p>Հանցակազմի օբյեկտիվ հատկանիշներ գործնական պարապմունք (2 ժամ)</p>	<p>Տեսակը` գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> ▪ խմբային քննարկումներ ▪ գործնական առաջադրանքներ ▪ կոնկրետ իրավիճակների վերլուծություն <p>Նպատակը` ներկայացնել հանցակազմի օբյեկտիվ հատկանիշների բովանդակությունը</p>	<ul style="list-style-type: none"> • ներկայացնել հանցակազմի օբյեկտիվ հատկանիշները: • բնութագրել հանցակազմի օբյեկտը և օբյեկտիվ կողմի հատկանիշները • ուշադրություն դարձնել օբյեկտիվ հատկանիշները կոնկրետ իրավիճակներում կիրառելու հմտություններին 	<p>Ընթացիկ գնահատում. Ակտիվություն, ներկա սովորողների առնվազն 30 տոկոսի կողմից բավարար գիտելիքների հավաստում և գնահատում</p>

		<p>Քննարկվող հարցերը` Հանցագործության օբյեկտի հասկացությունը: Հասարակական հարաբերությունները որպես հանցագործության օբյեկտ: Հանցագործության օբյեկտների տեսակները` ընդհանուր, սեռային, տեսակային, անմիջական, հիմնական և լրացուցիչ անմիջական օբյեկտներ: Հանցագործության օբյեկտիվ կողմի հասկացությունը և նշանակությունը: Հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները: Հանրորեն վտանգավոր արարք (գործողություն կամ անգործություն): Հանրորեն վտանգավոր հետևանքներ, հասկացությունը, տեսակները: Պատճառական կապը և դրա քրեաիրավական նշանակությունը: Հանցագործության եղանակը, ժամանակը, տեղը, իրադրությունը, գործիքը և միջոցը, դրանց քրեաիրավական նշանակությունը:</p>		
<p>19-րդ լսար. պարապ.</p>	<p>Հանցակազմի սուբյեկտիվ հատկանիշներ Դասախոսություն (2 ժամ)</p>	<p>Տեսակը` դասախոսություն</p> <ul style="list-style-type: none"> • դասախոսություն (ավանդական) • կոկրետ իրավիճակների քննարկում <p>Նպատակը` ներկայացնել հանցակազմի սուբյեկտիվ հատկանիշների բովանդակությունը</p> <p>Քննարկվող հարցերը` Հանցագործության սուբյեկտի հասկացությունը, հատկանիշները: Մեղսունակություն և անմեղսունակություն: Անմեղսունակության կենսաբանական (բժշկական) և հոգեբանական (իրավաբանական) հատկանիշները: Սահմանափակ մեղսունակություն: Տարիքը</p>	<ul style="list-style-type: none"> • ուշադրություն դարձնել հանցակազմի սուբյեկտիվ հատկանիշների բովանդակությանը և կառուցվածքային տարրերին 	<p>Ընթացիկ գնահատում. Ակտիվություն, հետադարձ կապ` Բանավոր հիմնավորումներ, հարցադրումներ</p>

		<p>որպես հանցագործության սուբյեկտի հատկանիշ: Հանցագործության հատուկ սուբյեկտ: Հանցագործության սուբյեկտիվ կողմի հասկացությունը և նշանակությունը: Հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները: Մեղքի հասկացությունը, ձևերը: Դիտավորությունը որպես մեղքի ձև: Անզուգուցությունը որպես մեղքի ձև: Առանց մեղքի վնաս պատճառելը: Մեղքի երկու ձևով կատարվող հանցագործությունները: Հանցագործության շարժառիթը, նպատակը, հույզերը, դրանց քրեաիրավական նշանակությունը:</p>		
<p>20-րդ լսար. պարապ.</p>	<p>Հանցակազմի սուբյեկտիվ հատկանիշներ Դասախոսություն (2 ժամ)</p>	<p>Տեսակը՝ դասախոսություն</p> <ul style="list-style-type: none"> • Ինտերակտիվ գրույց • դասախոսություն (ավանդական) • կոկրետ իրավիճակների քննարկում <p>Նպատակը՝ ներկայացնել հանցակազմի սուբյեկտիվ հատկանիշների բովանդակությունը</p> <p>Քննարկվող հարցերը՝ Հանցագործության սուբյեկտի հասկացությունը, հատկանիշները: Մեղսունակություն և ան-մեղսունակություն: Անմեղսունակության կենսաբանական (բժշկական) և հոգեբանական (իրավաբանական) հատկանիշները: Սահմանափակ մեղսունակություն: Տարիքը որպես հանցագործության սուբյեկտի հատկանիշ: Հանցագործության հատուկ սուբյեկտ: Հանցագործության սուբյեկտիվ կողմի հասկացությունը և նշանակությունը: Հանցակազմի սուբ-յեկտիվ կողմի պարտադիր</p>	<ul style="list-style-type: none"> • ուշադրություն դարձնել հանցակազմի սուբյեկտիվ հատկանիշների բովանդակությանը և կառուցվածքային տարրերին 	<p>Շնթացիկ գնահատում. Ակտիվություն, հետադարձ կապ՝ բանավոր հիմնավորումներ, հարցադրումներ</p>

		<p>և ֆակուլտատիվ հատկանիշները: Մեղքի հասկացությունը, ձևե-րը: Դիտավորությունը որպես մեղքի ձև: Անզգուշությունը որպես մեղքի ձև: Առանց մեղքի վնաս պատճառելը: Մեղքի երկու ձևով կատարվող հանցագործությունները: Հանցագործության շարժառիթը, նպատակը, հույզերը, դրանց քրեաիրավական նշանակությունը:</p>		
<p>21-րդ լսար. պարասյ.</p>	<p>Հանցակազմի սուբյեկտիվ հատկանիշներ Մեմինար պարապմունք (2 ժամ)</p>	<p>Տեսակը՝ գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> ▪ խմբային քննարկումներ ▪ գործնական առաջադրանքներ ▪ կոնկրետ իրավիճակների վերլուծություն <p>Նպատակը՝ ներկայացնել հանցակազմի սուբյեկտիվ հատկանիշների Ընթացիկ գնահատում. Ակտիվություն, ներկա սովորողների առնվազն 30 տոկոսի կողմից բավարար գիտելիքների հավաստում և գնահատում բովանդակությունը Քննարկվող հարցերը՝ Հանցագործության սուբյեկտի հասկացությունը, հատկանիշները: Մեղսունակություն և ան-մեղսունակություն: Անմեղսունակության կենսաբանական (բժշկական) և հոգեբանական (իրավաբանական) հատկանիշները: Սահմանափակ մեղսունակություն: Տարիքը որպես հանցագործության սուբյեկտի հատկանիշ: Հանցագործության հատուկ սուբյեկտ: Հանցագործության սուբյեկտիվ կողմի հասկացությունը և նշանակությունը: Հանցակազմի սուբ-յեկտիվ կողմի պարտադիր</p>	<ul style="list-style-type: none"> • ներկայացնել հանցակազմի սուբյեկտիվ հատկանիշները: • բնութագրել հանցակազմի սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը հատկանիշները 	<p>Ակտիվություն, ներկա սովորողների առնվազն 30 տոկոսի կողմից բավարար գիտելիքների հավաստում և գնահատում</p>

		<p>և ֆակուլտատիվ հատկանիշները: Մեղքի հասկացությունը, ձևերը: Դիտավորությունը որպես մեղքի ձև: Անզգուշությունը որպես մեղքի ձև: Առանց մեղքի վնաս պատճառելը: Մեղքի երկու ձևով կատարվող հանցագործությունները: Հանցագործության շարժառիթը, նպատակը, հույզերը, դրանց քրեաիրավական նշանակությունը:</p>		
<p>22-րդ լսար. պարապ.</p>	<p>Հանցակցություն Դասախոսություն (2 ժամ)</p>	<p>Տեսակը՝ դասախոսություն</p> <ul style="list-style-type: none"> • դասախոսություն (ավանդական) • կոկրետ իրավիճակների քննարկում <p>Նպատակը՝ ներկայացնել հանցակցության բովանդակությունը</p> <p>Քննարկվող հարցերը՝ Հանցակցության հասկացությունը, օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները: Երկու կամ ավելի անձանց մասնակցությունը հանցագործությանը որպես հանցակցության օբյեկտիվ հատկանիշ: Հանցագործությանը համատեղ մասնակցությունը որպես հանցակցության օբյեկտիվ հատկանիշ: Պատճառական կապը որպես հանցակցության օբյեկտիվ հատկանիշ: Հանցակիցների միջև եղած երկկողմանի սուբյեկտիվ կապը որպես հանցակցության հատկանիշ: Հանցակիցների տեսակները. կատարող, կազմակերպիչ, դրդիչ, օժանդակող:</p>	<ul style="list-style-type: none"> • ուշադրություն դարձնել հանցակցության բովանդակությանը և կառուցվածքային տարրերին 	<p>Ընթացիկ գնահատում. Ակտիվություն, հետադարձ կապ քանակոր հիմնավորումներ, հարցադրումներ</p>
<p>23-րդ լսար. պարապ.</p>	<p>Հանցակցություն սեմինար պարապմունք (2 ժամ)</p>	<p>Տեսակը՝ սեմինար պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> • սովորողների հարցում • թեստային վարժությունների լուծում • խմբային քննարկումներ • կոնկրետ իրավիճակների վերլուծություն 	<ul style="list-style-type: none"> • ներկայացնել հանցակցության հասկացությունը: • բնութագրել հանցակիցների տեսակները կատարող, կազմակերպիչ, դրդիչ, օժանդակող 	<p>Ընթացիկ գնահատում. Ակտիվություն, ներկա սովորողների առնվազն 30 տոկոսի կողմից բավարար գիտելիքների հավաստում և գնահատում</p>

		<p>Նպատակը` ամրապնդել հանցակցության վերաբերյալ տեսական գիտելիքները, պարզաբանել անհասկանալի հարցերը</p> <p>Քննարկվող հարցերը` Հանցակցության հասկացությունը, օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները: Երկու կամ ավելի անձանց մասնակցությունը հանցագործությանը որպես հանցակցության օբյեկտիվ հատկա-նիշ: Հանցագործությանը համատեղ մասնակցությունը որպես հանցակցության օբյեկտիվ հատկանիշ: Պատճառական կապը որպես հանցակցության օբյեկտիվ հատկանիշ: Հանցակիցների միջև եղած երկկողմանի սուբյեկտիվ կապը որպես հանցակցության հատկանիշ: Հանցակիցների տեսակները. կատարող, կազմակերպիչ, դրդիչ, օժանդակող:</p>		
<p>24-րդ լսար. պարասյ.</p>	<p>Հանցակցություն գործնական պարապմունք (2 ժամ)</p>	<p>Տեսակը` գործնական պարապմունք</p> <ul style="list-style-type: none"> ▪ խմբային քննարկումներ ▪ գործնական առաջադրանքներ ▪ կոնկրետ իրավիճակների վերլուծություն ▪ դատախազի մեթոդ <p>Նպատակը` ներկայացնել հանցակցության բովանդակությունը</p> <p>Քննարկվող հարցերը` Հանցակցության հասկացությունը, օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները: Երկու կամ ավելի անձանց մասնակցությունը հանցագործությանը որպես հանցակցության օբյեկտիվ հատկա-նիշ: Հանցագործությանը համատեղ մասնակցությունը որպես հանցակցության</p>	<ul style="list-style-type: none"> • ներկայացնել հանցակցության հասկացությունը: բնութագրել հանցակիցների տեսակները` կատարող, կազմակերպիչ, դրդիչ, օժանդակող • ներկայացնել թեմային առնչվող կոնկրետ իրավիճակներ, լուծել խնդիրներ 	<p>Ընթացիկ գնահատում. Ակտիվություն, ներկա սովորողների առնվազն 30 տոկոսի կողմից բավարար գիտելիքների հավաստում և գնահատում</p>

		օբյեկտիվ հատկանիշ: Պատճառական կապը որպես հանցակցության օբյեկտիվ հատկանիշ: Հանցակիցների միջև եղած երկկողմանի սուբյեկտիվ կապը որպես հանցակցության հատկանիշ: Հանցակիցների տեսակները. կատարող, կազմակերպիչ, դրդիչ, օժանդակող:		
25-րդ լսար. պարասյ	Հանցակազմ, հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, հանցակցություն Գործնական պարապմունք-ընթացիկ ստուգում (2 ժամ)	Տեսակը՝ Գործնական պարապմունք-ընթացիկ ստուգում Նպատակը՝ ստուգել նախորդ թեմաներից սովորողների գիտելիքներն ու կարողությունները	Սովորողներին տրվում է ընթացիկ ստուգման օրը	Ընթացիկ գնահատում. Գնահատումը կատարվում է 10 բալանոց համակարգով
